Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2019 թվականի ապրիլի 30-ի նիստում,
արձանագրություն N 11,
գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի պաշտոնակատար
_____ Ռ. Ա. Հայրապետյան
30 _____ 2019 թ.

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգը սահմանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) իրավասությունները, ձևավորման և աշխատանքի կարգը:

2. Հանձնաժողովն ստեղծվում է համալսարանի կանոնադրության 18-րդ կետի հիման վրա:

3. Սույն աշխատակարգը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում համալսարանի գիտական խորհուրդը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

4. Հանձնաժողովը՝

1) քննարկում է համալսարանի գիտահետազոտական գործունեության մեթոդական հարցերը և համապատասխան առաջարկություններ ներկայացնում գիտական խորհրդին, ռեկտորին, պրոռեկտորներին,

2) լսում և քննարկում է համալսարանի հետազոտական կենտրոնների, լաբորատորիաների, ուսանողական գիտական ընկերության հաշվետվությունները և համապատասխան առաջարկություններ ներկայացնում գիտական խորհրդին, ռեկտորին, պրոռեկտորներին,

3) քննարկում է ատենախոսությունների՝ համալսարանի ֆակուլտետների խորհուրդների և (կամ) ամբիոնների կողմից հաստատման ներկայացված թեմաներն ու գիտական ղեկավարների թեկնածությունները՝ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստին հրավիրելով համապատասխան ամբիոնի վարիչին, ասպիրանտին կամ հայցորդին, գիտական ղեկավարի թեկնածուին, և համապատասխան առաջարկություններ ներկայացնում գիտական խորհրդին կամ, ըստ անհրաժեշտության, առաջարկում ֆակուլտետների խորհուրդներին և (կամ) ամբիոններին կազմակերպել հավելյալ քննարկում:

5. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան երկու ամիսը մեկ անգամ:

6. Հանձնաժողովի նիստերի օրակարգում ներառվում են հանձնաժողովի գործառույթներից բխող և գիտական խորհրդի որոշմամբ, ռեկտորի առաջարկով, հանձնաժողովի նախագահի առաջարկով ձևավորված հարցերը:

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների ոչ պակաս, քան 2/3-ի ներկայության դեպքում:

8. Հանձնաժողովի որոշումները կայացվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

9. Հանձնաժողովի կազմը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում համալսարանի գիտական խորհուրդը:

10. Հանձնաժողովը կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի այլ անդամներ՝ գիտական խորհրդի կազմից: Հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը պետք է լինի 5-ից ոչ պակաս և 15-ից ոչ ավելի:

11. Հանձնաժողովի նախագահը համալսարանի գիտության գծով պրոռեկտորն է՝ ի պաշտոնե:

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստեր և ձևավորում է դրանց օրակարգերը՝ համաձայն սույն աշխատակարգի 6-րդ կետի,

2) վարում է հանձնաժողովի նիստերը և կազմակերպում որոշումների կայացման գործընթացը,

3) ստորագրում է հանձնաժողովի որոշումները,

4) ներկայացնում է հանձնաժողովը համալսարանի գիտական խորհրդում և այլ օղակներում:

13. Հանձնաժողովի քարտուղարը համալսարանի գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավարն է՝ ի պաշտոնե:

14. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկացնում է հանձնաժողովի մյուս անդամներին հանձնաժողովի նիստի հրավիրման մասին,

2) նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստով ուղարկում է հանձնաժողովի մյուս անդամներին նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերին առնչվող նյութերը, որոշումների նախագծերը,

3) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և ապահովում դրանց պահպանումը:

15. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն՝

1) հանձնաժողովի գործառույթներին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել հանձնաժողովի նախագահին,

2) հանձնաժողովի նիստերի արձանագրություններին կցել հատուկ կարծիք:

16. Հանձնաժողովի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել հանձնաժողովի նիստերին,

2) կատարել հանձնաժողովի որոշումները:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17. Սույն աշխատակարգն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 13-ից: